# Ծանոթացեք Լիբանանից
## Կարմենի հետ

*Ծանոթացեք Երեխաների միության երեխաների հետ, որոնք Հիսուսի օրինակով օգնում են ուրիշներին:*



### Ամեն ինչ Կարմենի մասին



**ՏԱՐԻՔԸ՝** 8 տարեկան

**ՍԻՐԻԱՅԻՑ.** Բայց այժմ ապրում է Լիբանանում

**ԼԵԶՈՒՆԵՐԸ՝** արաբերեն, անգլերեն

**ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԵՐԱԶԱՆՔՆԵՐԸ.**
1) Այցելել տաճար:
2) Դառնալ նկարիչ:
3) Ծառայել միսիայում:



**ԸՆՏԱՆԻՔ.** Կարմենը ունի երկու ավագ քույր և մի ավագ եղբայր:



## Կարմենի օգնող ձեռքերը

Կարմենը և նրա մայրը ապրում են Լիբանանում, բայց նրանք մի ժամանակ ապրում էին Սիրիայում: Նրանց հարևանները նույնպես Սիրիայից են: Անցած դեկտեմբերին Կարմենը ցանկանում էր որևէ բարի գործ անել նրանց համար: Ամեն օր՝ մինչև Սուրբ ծնունդը, Կարմենը խանութից մի փոքրիկ բան էր գնում: Նա այդ իրերը դնում էր արկղի մեջ: 25 օր հետո արկղը լցվեց: Սուրբ ծննդյան օրը Կարմենը վերցրեց արկղը և տարավ իր հարևաններին: Նրանք այնքան երախտապարտ էին: Կարմենն ասում է, որ իր ծառայությունն օգնեց իրեն հիշել Հիսուս Քրիստոսի մատուցած ծառայությունը: «Երբ մենք սեր ենք ցույց տալիս ուրիշների հանդեպ,- ասում է Կարմենը, - մենք զգում ենք Աստծո սերը»:



**Կարմենը հետևում է Հիսուսին՝ օգնելով իր հարևաններին: Շրջեք էջը և կարդացեք մի պատմություն այն մասին, թե Հիսուսն ինչպես ուսուցանեց մեզ սիրել մեր մերձավորներին:**

### Ինչ է սիրում Կարմենը



**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԻՍՈՒՍԻ ՄԱՍԻՆ.** Երբ Հիսուսը քայլեց ջրի վրայով



**ՎԱՅՐԸ՝** Ծովափը



**ՈՒՏԵԼԻՔ.** արիշտա, մրգային պաղպաղակ




**ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆ՝** բնագիտություն



**ԳՈՒՅՆԸ.** Բաց մանուշակագույն

### Միացե՛ք Օգնող ձեռքերի թիմին



Երբ դուք ծառայում եք ուրիշներին, դառնում եք Օգնող ձեռքեր թիմի մասը: Ո՞ւմ կարող եք ծառայել: